11102025 – ՎԵՐՋՆԱԿԱՆ/Թարգմանության օրինակ

Սպառողների գաղտնիության վերաբերյալ գլոբալ ծանուցագիր

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ Հունվարի 31, 2026

Կոկա-Կոլա ընկերությունը և դրա դուստր ձեռնարկությունները (միասին՝ ***Կոկա-Կոլա*** կամ ***մենք***) հարգում են Ձեր գաղտնիությունը և ամենայն լրջությամբ են վերաբերվում Ձեր անձնական տվյալների պաշտպանությանը: Մենք գնահատում ենք Ձեր վստահությունը և հանձնառու ենք պաշտպանել Ձեր տվյալները և Ձեզ տրամադրել վերահսկողություն դրանց նկատմամբ: Այս ծանուցագիրը բացատրում է, թե ինչպես ենք մշակում Ձեր տվյալները և ինչպես կարող եք դրանք կառավարել՝ կախված Ձեր բնակության վայրից:

Սույն ծանուցագիրը կիրառվում է, երբ օգտվում եք մեր Ծառայություններից (սահմանված է ստորև), որոնք հղում են կատարում այս ծանուցագրին և չի կիրառվում, երբ մեր կայքէջերից որևէ մեկն ունի իր սեփական հատուկ ծանուցագիրը: Մեր լրացուցիչ գաղտնիության ծանուցագրերը կարող են նաև կիրառվել Ձեր նկատմամբ՝ կախված Ձեր գտնվելու վայրից կամ մեր Ծառայություններից օգտվելիս. մանրամասն տեղեկությունների համար տե՛ս մեր «Գաղտնիության վերաբերյալ լրացուցիչ ծանուցագրեր» էջը:

ԵԹԵ ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵՔ ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ԿՈԿԱ-ԿՈԼԱՆ ՄՇԱԿՈՒՄ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՄԵԶ ՀԵՏ:

ԻՆՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ ՍՊԱՌՈՂԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳՐՈՒՄ:

1. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ
2. ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ
3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ
4. ՔՈՒՔԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ
5. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՍՈՒՄ
6. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ
7. ՈՐՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԵՆՔ ՊԱՀՈՒՄ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ
8. ՁԵՐ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
9. ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ
10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ
11. ՍՊԱՌՈՂԻ ԱՅՍ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Անձնական տվյալներ նշանակում է ցանկացած տեղեկատվություն, որը Ձեզ նույնականացնում է ուղղակիորեն (օրինակ՝ Ձեր անունը) կամ անուղղակիորեն (օրինակ՝ նույնականացման (ID) համարը), կամ ինչպես սահմանված է գործող գաղտնիության վերաբերյալ օրենքներով:

Այս ծանուցագիրը վերաբերում է Կոկա-Կոլա ապրանքանիշների կամ պրոդուկտների կողմից Ձեզանից կամ Ձեր մասին հետևյալ աղբյուրներից (**Ծառայություններ**) հավաքված անձնական տվյալներին.

Կոկա-Կոլայի կայքէջեր կամ հավելվածներ: Մեր կողմից կամ մեզ համար գործարկվող սպառողների համար նախատեսված կայքէջեր, բջջային կայքեր կամ հավելվածներ, այդ թվում կայքեր, որոնք գործարկում ենք մեր սեփական տիրույթների/URL-ների ներքո, մինի-կայքեր,

որոնք մենք գործարկում ենք երրորդ կողմի սոցիալական ցանցերում, ինչպիսիք են Facebook-ը և սմարթֆոնների հավելվածները:

Սարքի վերաբերյալ տվյալներ: Մեր կայքէջեր կամ հավելվածներ մուտք գործելու համար օգտագործվող սարքերից ստացված տեղեկություններ:

Առցանց հաշիվ, գրանցումներ կամ հարցումներ Ձեր Կոկա-Կոլայի հաշիվը, ակցիաներին մասնակցելու գրանցման ձևերը, հարցումները կամ հավատարմության ծրագրերը, ինչպես նաև, երբ Դուք մեզ ուղղակիորեն հարցում եք ներկայացնում:

Առցանց կամ անցանց գնումներ՝ մեր խանութների միջոցով:Մանրամասներ, որոնք տրամադրվում են մեր պրոդուկտները և/կամ ծառայությունները գնելիս:

Էլ. փոստ, SMS և այլ էլեկտրոնային հաղորդագրություններ: Ձեր և Կոկա-Կոլայի միջև էլեկտրոնային հաղորդակցության միջոցով իրականացվող փոխազդեցություններ:

Կոկա-Կոլայի սպառողների սպասարկման ծառայություններ: Հաղորդակցություն մեր սպառողների սպասարկման թիմի հետ: Տե՛ս Սպառողների առողջության տվյալների վերաբերյալ գաղտնիության քաղաքականությունը, որպեսզի ստանաք լրացուցիչ տեղեկություններ այն մասին, թե ինչպես կարող ենք մշակել անձնական տվյալները, որոնք կարող են դիտարկվել առողջության հետ կապված տվյալներ:

Անձնական փոխազդեցություններ: Մենք տվյալներ ենք հավաքում Ձեզանից անձնական հանդիպումների ժամանակ, օրինակ՝ երբ տրամադրում եք կոնտակտային տվյալներ խանութներում ցուցադրությունների կամ պրոդուկտի նմուշների ժամանակ, մասնակցում եք մրցույթների և ակցիաների, կամ երբ մենք օգտագործում ենք փակ շղթայական տեսահսկման տեսախցիկներ (**CCTV**) մեր մասնաճյուղերից մեկում կամ Կոկա-Կոլայի կողմից հովանավորվող կամ կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Գովազդային փոխազդեցություններ: Մեր գովազդների հետ փոխազդեցությունները (օրինակ՝ եթե փոխազդում եք մեր գովազդներից մեկի հետ երրորդ կողմի կայքէջում, մենք կարող ենք տեղեկատվություն ստանալ այդ փոխազդեցության մասին) կամ երբ գրանցվում եք մեր շուկայավարման հաղորդակցությունների համար:

Մասնակցություն վիճակախաղի մրցույթին, այլ ակցիային կամ հավատարմության ծրագրին: Տվյալներ, որոնք տրամադրում եք մեր վիճակախաղերին, առցանց և անցանց ակցիաներին մասնակցելու կամ ընդունվելու և/կամ հավատարմության ծրագրին գրանցվելու համար: Օրինակ՝ երբ ընտրում եք վերբեռնել Ձեր լուսանկարը կամ տեսանյութը՝ առցանց շուկայավարման փորձառությանը մասնակցություն ցուցաբերելու համար:

Տվյալներ, որոնք ստեղծում ենք: Ձեզ հետ մեր ունեցած փոխազդեցությունների ժամանակ մենք կարող ենք ստեղծել անձնական տվյալներ Ձեր մասին (օրինակ՝ տվյալներ, որոնք ավտոմատ կերպով հավաքվում են, երբ մուտք եք գործում մեր կայքէջեր կամ հավելվածներ, այդ թվում՝ IP հասցեն, սարքի ID-ն, զննարկչի տեսակը և մեր կայքերի հետ Ձեր փոխազդեցությունը):

Տվյալներ այլ աղբյուրներից: Մենք կարող ենք տեղեկություններ հավաքել Ձեր մասին մեր երրորդ կողմի գործընկերներից, այդ թվում՝ վաճառքի գործընկերներից (օրինակ՝ TikTok Shop-ի վաճառքի գրառումներից), տվյալների վերլուծության մատակարարներից (օրինակ՝ Google Analytics և Meta), օգտատիրոջ փորձառության տեղեկատվությունը վերահսկելու երրորդ կողմի գործիքներից, ներառյալ մկնիկի սեղմումները և էջի ոլորումը, սոցիալական ցանցերից (օրինակ՝

Meta), գովազդային ցանցերից (օրինակ՝ Google), գովազդային գործընկերներից, շուկայի ուսումնասիրություններ իրականացնող ընկերություններից (եթե հետադարձ կապը չի տրամադրվում անանուն հիմունքներով), երրորդ կողմի տվյալների ագրեգատորներից, շուկայավարման ընկերություններից, Կոկա-Կոլայի գովազդային գործընկերներից, հանրային աղբյուրներից, ինչպիսիք են LinkedIn-ի մասնագիտական տեղեկատվությունը, ինչպես նաև այլ ընկերություններ ձեռք բերելիս ստացված տվյալներից:

Այս ծանուցագիրը չի կիրառվում այլ կազմակերպությունների կողմից կառավարվող կայքէջերի կամ առցանց ծառայությունների նկատմամբ: Ստուգեք նրանց գաղտնիության ծանուցագրերը՝ հասկանալու, թե ինչպես են նրանք մշակում Ձեր տվյալները:

2. ԻՆՉ ՏԵՍԱԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԵՆՔ ՀԱՎԱՔՈՒՄ

<u>Տեղեկություններ, որոնք որոշել եք տրամադրել մեզ:</u> Կախված նրանից, թե ինչպես եք փոխազդում մեր Ծառայությունների հետ, մենք հավաքում ենք այն անձնական տվյալները, որոնք ընտրում եք մեզ հետ կիսվելու համար, այդ թվում անձնական տվյալների հետևյալ կատեգորիաները՝

Կատեգորիա	Օրինակներ
Կոնտակտային և հաշվի տվյալներ	Անուն, էլեկտրոնային փոստի հասցե, փոստային հասցե, հեռախոսահամար, տարիքային խումբ և ծննդյան ամսաթիվ, օգտատիրոջ անուն և գաղտնաբառ կամ այլ անվտանգության պատասխան, անձնական թվային վկայական (օգտատիրոջ նույնականացման համար), պետական մարմնի կողմից տրված ID կամ այլ նույնականացուցիչ:
Հաղորդակցությունը մեզ հետ	Էլ. փոստեր, զրույցներ, վեբ-ձևաթղթեր և հեռախոսազանգեր (այդ թվում Ձեր համաձայնությամբ ձայնագրություններ, եթե դա պահանջվում է օրենքով):
Ժողովրդագրական տվյալներ և հետաքրքրություններ	Տեղեկատվություն, որը նկարագրում է Ձեր ժողովրդագրական կամ վարքային բնութագրերը, ինչպիսիք են Ձեր տարիքային խումբը և ծննդյան ամսաթիվը, սեռը, աշխարհագրական դիրքը (օրինակ՝ փոստային ինդեքսը), սիրելի պրոդուկտները, բովանդակության նախասիրությունները, հոբբիներն ու հետաքրքրությունները, ինչպես նաև տնային տնտեսության կամ կենսակերպին վերաբերող տվյալները:
Օգտատիրոջ կողմից ստեղծված բովանդակություն (UGC)	Սոցիալական ցանցերում գրառումներ, մեկնաբանություններ կամ կարծիքներ, հարցումների պատասխաններ, հաճախորդների սպասարկման հարցումներ, ձայնային ձայնագրություններ, լուսանկարներ, տեսանյութեր և Ձեր կողմից տրամադրված այլ մեդիա ֆայլեր:
Տեղեկատվություն, որը կապված է սոցցանցերի հարթակում առկա հաշվի հետ	Երբ մուտք եք գործում մեր Ծառայություններ՝ միանալով կամ մուտք գործելով Ձեր սոցիալական ցանցերի հաշիվների օգնությամբ, մենք հավաքում ենք սոցիալական ցանցերի հարթակի կողմից թույլատրված անձնական տվյալները և Ձեր հաշվի թույլտվությունները, ինչպիսիք են՝ պրոֆիլի լուսանկարը, էլ. փոստը, հավանումները, հետաքրքրությունները, ընկերները, հետևորդները կամ նմանատիպ տեղեկությունները: Դուք կարող եք փոփոխել Ձեր կարգավորումները Ձեր սոցիալական ցանցերի հաշիվներում, եթե այլևս չեք ցանկանում մեզ տրամադրել այս տվյալները:

Մեր կայքէջերին և հավելվածներին տրամադրված այլ տեղեկություններ (Ձեր թույլտվությամբ)	Անհրաժեշտության դեպքում կարող ենք հավաքել հետևյալը Ձեր համաձայնությամբ՝ գտնվելու վայրի վերաբերյալ տվյալներ, ձայնային ձայնագրություններ, տեսանյութեր, լուսանկարներ և այլ մեդիա ֆայլեր: Մեր հավելվածներում որոշակի գործառույթներ (օրինակ՝ գտնվելու վայրի ծառայություններ) օգտագործելու համար Դուք պետք է միացնեք այդ հնարավորությունը հավելվածում և սահմանեք թույլտվությունները Ձեր բջջային սարքում՝ համօգտագործումը միացնելու համար: Վերանայեք Ձեր սարքի կարգավորումները և այն հարթակը, որտեղից ներբեռնել եք տվյալ հավելվածը՝ տվյալների հավաքագրման և թույլտվությունները կարգավորելու համար: Այս կարգավորումները փոփոխելը կարող է սահմանափակել հավելվածի որոշ գործառույթներ: Հավելվածի ապատեղադրումը կդադարեցնի տվյալների հավաքագրումը:

Անձնական տվյալների որոշ տեսակներ համապատասխան տվյալների պաշտպանության օրենքներով նույնականացվում են որպես զգայուն անձնական տվյալներ կամ տվյալների հատուկ կատեգորիաներ: Այս դեպքերում մենք համապատասխանում ենք տվյալների պաշտպանության բոլոր կիրառելի պարտավորություններին: Օրինակ՝ անձնական տվյալների հետևյալ տեսակները կարող են համարվել զգայուն անձնական տվյալներ՝ համաձայն որոշակի օրենքների.

Կատեգորիա	Օրինակներ
ճշգրիտ աշխարհագրական դիրքի տվյալներ	Մենք հավաքում ենք ճշգրիտ աշխարհագրական (նաև հայտնի է որպես GPS) տվյալներ, երբ թույլատրվում է մեր Ծառայությունների միջոցով, երբ ընտրում եք դա թույլ տալ Ձեր բջջային սարքի գործավարական համակարգի միջոցով և այլ կերպ՝ Ձեր համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության:
Կենսաչափական տվյալներ	Կախված տվյալների պաշտպանության կիրառելի օրենքներից՝ լուսանկարները, ձայնային ձայնագրությունները և տեսանյութերը, որոնք ընտրում եք կիսվել, կարող են կազմել կենսաչափական տվյալներ, եթե տվյալները թույլ են տալիս անհատի եզակի նույնականացում: Կոկա-Կոլան հավաքում է կենսաչափական տվյալներ միայն Ձեր հատուկ համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության:
Առողջական տվյալներ	Եթե որոշեք մասնակցել մեր անձնական միջոցառումներից մեկին, կարող եք տեղեկություններ տրամադրել Ձեր սննդակարգի պահանջների և կացության այլ հարցերի վերաբերյալ: Այս տեղեկատվությունը կհավաքագրվի և կփոխանցվի միայն Ձեր համաձայնությամբ՝ բացառապես Ձեր կողմից պահանջված ծառայությունները տրամադրելու նպատակով:

<u>Մենք ավտոմատ կերպով հավաքում ենք հետևյալ տեղեկությունները.</u> Մենք ավտոմատ եղանակով հավաքում ենք որոշակի տեղեկություններ մեր Ծառայությունների օգտագործումից և դրա օգտագործման վերաբերյալ Ձեր համակարգիչներից, բջջային հեռախոսներից և այլ սարքերից, որոնք կարող են լինել անձնական տվյալներ: Այս տեղեկատվությունը հավաքագրվում է ավտոմատ եղանակով՝ օգտագործելով քուքիներ, պիքսելներ, վեբ-փարոսներ և նմանատիպ տեխնոլոգիաներ:

Կատեգորիա	Օրինակներ
Տեղեկություններ սարքի օգտագործման և գտնվելու վայրի մասին	Մեր Ծառայություններ մուտք գործելու համար Ձեր կողմից օգտագործվող համակարգչային համակարգի կամ այլ տեխնոլոգիական սարքի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, ինչպիսիք են՝ ինտերնետային արձանագրության (IP) հասցեն, սարքի տեսակը և նույնականացման համարը, ինտերնետային ծառայության մատակարարը, բջջային ցանցը, գործավարական համակարգը, վեբ, զննարկչի տեսակը և տարբերակը, համակարգային իրադարձությունները, մոտավոր գտնվելու վայրն IP հասցեից կամ Wi-Fi-ի, Bluetooth-ի կամ անլար ցանցային ծառայության հետ կապերից: Ինչպես է Ձեր համակարգիչը կամ բջջային սարքը փոխազդում մեր Ծառայությունների հետ, ներառյալ՝ մեր Ծառայություններ մուտք գործելու ամսաթիվը և ժամը, մեր շուկայավարման էլեկտրոնային նամակների հետ փոխազդեցությունները (օրինակ՝ եթե բացվել է), որոնման հարցումներ և արդյունքներ, մկնիկի սեղմումներ և շարժեր, որոշակի կայքէջեր, որոնց մուտք եք գործել, էջի ոլորում և կայքի ձևաթղթերում մուտքագրված տեքստ, հղումների սեղմումներ և դիտված տեսանյութեր, երթևեկի և օգտագործման չափումներ, ինչպես նաև մեր Ծառայությունների հետ փոխազդելուց առաջ մուտքագրված երրորդ կողմի կայքերի կամ ծառայությունների մասին տվյալներ: Կայքէջի օգտագործման տվյալները հավաքագրվում են հիմնական և երրորդ կողմի քուքիների և այլ հետևման տեխնոլոգիաների միջոցով՝ պրոդուկտների/ծառայությունների ժողովրդականությունը և առցանց ակտիվությունը որոշելու համար: Առավել մանրամասների համար տե՛ս մեր Քուքիների մասին ծանուցագիր բաժինը: Մենք օգտագործում ենք երրորդ կողմի գործիքներ, ինչպիսիք են Microsoft Clarity-ն և Full Story-ն՝ օգտատիրոջ փորձի վերաբերյալ տեղեկատվությունը վերահսկելու համար: Այս գործիքներն ավտոմատ կերպով հավաքում են օգտագործման մասին տեղեկություններ, այդ թվում մկնիկի սեղմումները և շարժերը, էջի ոլորումը և կայքի ձևաթղթերում մուտքագրված ցանկացած տեքստ: Հավաքված տեղեկատվությունը չի պարունակում գաղտնաբառեր, վճարման մանրամասներ կամ այլ զգայուն անձնական տվյալներ: Այս տեղեկատվությունը հավաքվում է ավտոմատ կերպով՝ օգտագործելով քուքիներ, պիքսել, վեբ փարոսներ և տվյալների հավաքագրման նմանատիպ տեխնոլոգիաներ (հավաքականորեն՝ տվյալների հավաքագրման տեխնոլոգիա): Կարող եք իմանալ ավելին՝ այցելելով Microsoft-ի գաղտնիության վերաբերյալ հայտարարությունը և Full Story-ի գաղտնիության հայտարարության մասին ամբողջական պատմությունը:
Գնումների մասին տեղեկատվություն	Մենք հավաքում ենք տեղեկություններ Ձեր գործարքների մասին, այդ թվում՝ թե ինչ պրոդուկտներ եք գնում, որքան հաճախ եք դրանք գնում, գնման հետ կապված ցանկացած պարգևատրում կամ ակցիա,

	և հետագա գնումների համար Ձեր զամբյուղում տեղադրված պրոդուկտները: *Վճարային քարտով գնումները մշակվում են երրորդ կողմի վճարային պրոցեսորների կողմից: Կոկա-Կոլան չունի հասանելիություն ամբողջական բանկային հաշվի համարների, վարկային քարտերի համարների կամ դեբետային քարտերի համարների նկատմամբ:*
Տվյալներ, որոնք ստեղծում ենք	Մենք կարող ենք ստեղծել Ձեր մասին անձնական տվյալներ, ինչպիսիք են Ձեր գնումների վերաբերյալ գրառումները: Մենք կարող ենք նաև համատեղել Ձեր մասին անձնական տվյալները Ձեր անձնական նախասիրությունները գնահատելու, վերլուծելու կամ կանխատեսելու համար:
Աուդիո և տեսողական տեղեկություններ	Երբ այցելում եք մեզ, մենք կարող ենք հավաքել աուդիո և տեսողական տեղեկություններ: Օրինակ՝ մեր գտնվելու որոշ վայրերում կարող են տեղադրվել տեսահսկման համակարգեր (CCTV), և այդ տեսահսկման համակարգերի տեսախցիկները կարող են հավաքել աուդիո, տեսողական և նմանատիպ տեղեկություններ:

<u>Երրորդ կողմերից հավաքված տեղեկատվություն</u>. Ժամանակ առ ժամանակ մենք երրորդ կողմերից ստանում ենք անձնական տվյալներ, որոնք օգտագործում ենք մեր սպառողների մասին ավելին իմանալու, սպառողների փորձն անհատականացնելու և մեր Ծառայություններն ավելի արդյունավետ եղանակով խթանելու և բարելավելու համար:

Կատեգորիա	Օրինակներ
Երրորդ կողմի գործընկերներ	Մենք հավաքում և ստանում ենք տեղեկություններ գործընկերներից, վերլուծական ծառայությունների մատակարարներից, շուկայավարման ծառայությունների մատակարարներից և այլ երրորդ կողմերից՝ մեր Ծառայություններում և դրա սահմաններից դուրս Ձեր գործունեության վերաբերյալ, ինչպիսիք են՝ • Գնումների հետ կապված անձնական տեղեկություններ: • Անձնական տվյալներ, որոնք առևտրային առումով հասանելի են շուկայավարման գործընկերների կամ շուկայավարման ծառայությունների մատակարարների կողմից կամ հավաքագրվում են շուկայավարման գործընկերների կողմից արշավների և միջոցառումների միջոցով, որոնք օգտագործվում են սպառողներին և լսարանին նույնականացնելու համար, ովքեր կարող են հետաքրքրված լինել Կոկա-Կոլայի մասին ավելին իմանալով և լրացնելու մեր արդեն իսկ ունեցած անձնական տվյալները՝ օգնելու մեզ ապահովել ավելի համապատասխան գովազդ: • Անձնական տվյալներ, որոնք կիսվել են Կոկա-Կոլայի հետ շշալցման գործընկերների կողմից: • Հանրային աղբյուրներից ստացված անձնական տվյալներ, ինչպիսիք են այն տվյալները, որոնք հրապարակայնորեն կիսվում եք երրորդ կողմի սոցիալական ցանցում: Օրինակներն ընդգրկում են Ձեր կոնտակտային և հաշվի վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ցանկացած այլ տեղեկատվություն կամ գործունեություն, որը թույլատրում եք երրորդ կողմի սոցիալական ցանցին կիսվել, կամ Ձեր LinkedIn-ի մասնագիտական տվյալները:

	• Ձեր այցելած կայքէջեր և տվյալների քուքիներ: Առավել մանրամասներին ծանոթանալու համար տե՛ս մեր Ծանուցագիր քուքիների մասին բաժինը: • Անձնական տվյալներ, որոնք խնդրում եք երրորդ կողմի գործընկերներին կիսվել մեզ հետ (օրինակ՝ Ձեր էլեկտրոնային փոստի հասցեն շուկայավարման նպատակներով): Մենք կարող ենք համատեղել Ձեր մասին մեր ունեցած տվյալները կամ համատեղել երրորդ կողմի տվյալների աղբյուրներից ստացված տվյալները: Մենք պահանջում ենք, որ յուրաքանչյուր երրորդ կողմի տվյալների մատակարար հաստատի, որ Կոկա-Կոլայի հետ իր կիսած անձնական տվյալները սպառողների համար թափանցիկ են և այլ կերպ օրինական:

3. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՄԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հետևյալ ցանկը բացատրում է Ձեր անձնական տվյալները հավաքելու նպատակները և տրամադրում որոշ օրինակներ: Ցանկացած լրացուցիչ օգտագործում կկատարվի միայն օրենքով թույլատրված դեպքերում՝ Ձեր ծանուցմամբ և համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության:

- **Ձեզ մեր պրոդուկտները և Ծառայությունները տրամադրելու համար:** Օրինակ՝ մենք օգտագործում ենք կոնտակտային և հաշվի վերաբերյալ տվյալները՝ հաշիվներ ստեղծելու, ինքնությունը և փորձառություններին մասնակցելու իրավասությունը ստուգելու, մեր Ծառայությունից օգտվելու փորձն ապահովելու համար, ինչպես նաև մեր Ծառայություններում Ձեր փորձառությունը բարելավելու և անհատականացնելու համար:
- **Ձեր մասին ավելին իմանալու համար:**Օրինակ՝ մենք օգտագործում ենք ժողովրդագրական տեղեկություններն ու հետաքրքրությունները, սոցիալական ցանցերի հաշիվների հետ կապված տեղեկությունները, ինչպես նաև գնումների վերաբերյալ տեղեկությունները՝ նախընտրությունները կանխատեսելու, մեր Ծառայություններն օպտիմալացնելու և սպառողների կարծիքները հասկանալու համար: Սա կարող է ներառել երրորդ կողմերից կամ այլ աղբյուրներից մեր կողմից հավաքագրված տեղեկությունները: Մենք նաև համատեղում ենք անձնական տվյալները՝ անձնական նախասիրությունները գնահատելու, վերլուծելու կամ կանխատեսելու համար, այդ թվում՝ տվյալների ջնջման սենյակներում կեղծանունացված տեղեկատվությունը համապատասխանեցնելով՝ մեր սպառողների մասին ավելին իմանալու և պատկերացում կազմելու համար՝ լսարանի հայտնաբերման, լսարանի ընդլայնման, լսարանի թիրախավորման և նման լսարանի մոդելավորման նպատակով:
- **Վիճակախաղերի մրցույթի, ակցիայի կամ հավատարմության ծրագրի կառավարման համար:** Օրինակ՝ մենք օգտագործում ենք ժողովրդագրական տեղեկությունները՝ մասնակցության իրավասությունը ստուգելու և Ձեր մասնակցությունը վիճակախաղի մրցույթին, ակցիային կամ հավատարմության ծրագրին հեշտացնելու, կամ Ձեր անձնական տվյալները երրորդ կողմի գործընկերների հետ կիսվելու համար՝ ըստ Ձեր ցանկությամբ:
- **Ձեզ շուկայավարման, թիրախային գովազդային կամ այլ ակցիայի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար:** Օրինակ՝ մենք օգտագործում ենք կոնտակտային և հաշվի վերաբերյալ տվյալները, Ձեր առցանց գործունեության, գտնվելու վայրի տվյալների կամ Ձեր հաշվի կամ սոցիալական ցանցերի հաշիվների հետ կապված այլ տեղեկություններ, կամ սարքի ID-ի և համակարգային

իրադարձությունների համադրությունից ստացված տեղեկությունները, որոնք օգտագործվում են վարքային միտումներն ու օրինաչափությունները որոշելու համար՝ Ձեզ շուկայավարման հաղորդագրություններ ուղարկելու համար՝ հիմնված ենթադրյալ հետաքրքրությունների վրա: Մենք նաև ուղարկում ենք շուկայավարման անհատականացված հաղորդագրություններ և կիսվում ենք թիրախային գովազդով Ձեզ հետ՝ Ձեր համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության: Մենք ուղարկում ենք տեղեկատվություն մեր պրոդուկտների և ծառայությունների մասին, որոնք, մեր կարծիքով, կարող են Ձեզ դուր գալ, ինչպես նաև գործընկերների առաջարկները:

- **Ձեզ հետ շփվելու համար, երբ կապ եք հաստատում մեզ հետ կամ Ձեր կարծիքն առաջարկելու համար:** Օրինակ՝ մենք օգտագործում ենք կոնտակտային և հաշվի վերաբերյալ տվյալները, մեզ հետ Ձեր ունեցած հաղորդակցությունները և Ձեզ հետ կապված այլ տեղեկություններ (օրինակ՝ սոցիալական ցանցերի հաշիվներ)՝ հաղորդակցվելու կամ հարցերին պատասխանելու, արձագանք խնդրելու և ոչ շուկայավարման հաղորդագրություններ ուղարկելու համար:
- **Մեր պայմանները, համաձայնագրերը և քաղաքականությունները կիրառելու համար:** Օրինակ՝ մենք վերանայում ենք հաշվի վերաբերյալ տվյալները կամ սպառողների կողմից մեդիա վերբեռնումները և չափավորում ենք բովանդակությունը, ինչպիսիք են աուդիոն, նկարները և տեսանյութերը, որոնք վերբեռնում եք փորձառությանը մասնակցություն ունենալու համար, ինչպես նաև սպառողների կողմից ստեղծված բովանդակությունը՝ անվտանգ, պաշտպանված և հուսալի միջավայր պահպանելու համար: Մենք օգտագործում ենք տեսահսկման համակարգեր (CCTV)՝ շենքերի անվտանգությունը վերահսկելու, հանցագործությունների կանխարգելմանը, հայտնաբերմանը և հետաքննությանը նպաստելու, ինչպես նաև մեր աշխատակիցների և մեր մասնաճյուղեր այցելողների անվտանգությունն ապահովելու համար:
- **Մեր պրոդուկտները և Ծառայությունները բարելավելու համար:**Օրինակ՝ մենք օգտագործում ենք երրորդ կողմի գործիքներ՝ օգտատիրոջ փորձառության մասին տեղեկատվությունը վերահսկելու համար, որպեսզի կարողանանք լուծել խնդիրները և վերլուծություններ իրականացնել՝ Ձեզ ավելի լավ փորձառություն տրամադրելու համար:
- **Օրենքներին և քաղաքականությանը համապատասխանելու համար:**Օրինակ՝ մենք կարող ենք օգտագործել Ձեր կոնտակտային և հաշվի վերաբերյալ տվյալները կամ այլ հաղորդակցություններ՝ խարդախությունից պաշտպանվելու կամ անվտանգության հետ կապված միջադեպեր հայտնաբերելու, ինչպես նաև սպառողական պայմանագրերի պահպանումը վերահսկելու և ապահովելու համար:
- **Մեր իրավական պարտավորությունները կատարելու կամ իրավական պահանջներ կամ վեճեր լուծելու համար:**Օրինակ՝ մենք կարող ենք պարտավոր լինել մշակել որոշակի տեղեկատվություն որոշակի օրենքների և կանոնակարգերի ներքո, ինչպիսիք են հարկային օրենքները, ինչպես նաև պահպանել համապատասխան գրառումներ ներքին վարչական նպատակներով, համապատասխանել կիրառելի իրավական և կարգավորող պարտավորություններին և արձագանքել կառավարության օրինական հարցումներին կամ պահանջներին:

<u>Մշակման իրավական հիմքերը.</u> Որոշ վայրերում մենք պարտավոր ենք տեղեկացնել Ձեզ, որ մշակում ենք Ձեր անձնական տվյալները՝ համաձայն որոշակի իրավական հիմքերի: Մենք վստահում ենք հետևյալ իրավական հիմքերին՝

- **Ձեզ հետ պայմանագիր կնքելու կամ այն կատարելու համար:** Օրինակ՝ երբ մուտք եք գործում կամ օգտվում եք մեր ծառայություններից (օրինակ՝ Ձեր պրոդուկտների և ծառայությունների գնումները կամ հարցումները մշակելու համար), գրանցել և ստուգել սպառողի հաշիվները, կառավարել մրցանակները և ակցիաները, և հեշտացնել մեր

կայքէջերի և բջջային հավելվածների ֆունկցիոնալությունը, այդ թվում վճարումների հետ կապված ֆունկցիոնալությունը:

- **Մեր օրինական շահերի համար:** Մենք մշակում ենք որոշակի անձնական տվյալներ՝ ելնելով մեր օրինական գործարար շահերից, եթե դրանք չեն խախտվում Ձեր գաղտնիության կամ այլ հիմնարար իրավունքների և ազատությունների կողմից, օրինակ՝ Ձեզ հետ հաղորդակցվելու Ձեր հաշիվների, մեր Ծառայությունների, մեր շուկայավարման և Ձեր հարցումների վերաբերյալ կամ մեր պայմանները, համաձայնագրերը և քաղաքականությունը կիրառելու համար:
- **Կիրառելի օրենքներին համապատասխանելու համար:** Մենք պարտավոր ենք մշակել որոշակի անձնական տվյալներ որոշակի օրենքների և կանոնակարգերի համաձայն, օրինակ՝ հարկային օրենքների, ինչպես նաև պահպանել համապատասխան գրառումներ ներքին վարչական նպատակներով և արձագանքել կառավարության օրինական հարցումներին, ըստ անհրաժեշտության:
- **Ձեր համաձայնությամբ:** Եթե դրա համար ունենանք Ձեր համաձայնությունը, մենք կմշակենք որոշակի անձնական տվյալներ, այդ թվում՝ Ձեզ անհատականացված ակցիաների և հատուկ առաջարկների ուղարկումը շուկայավարման հաղորդակցության ուղիներով (այդ թվում էլ. փոստը, SMS-ը, փուշ ծանուցումները) և Ձեզ տեղեկացնելը մեր ապրանքանիշների, պրոդուկտների, միջոցառումների և այլ ակցիաների մասին: Դուք կարող եք ցանկացած պահի հետ վերցնել Ձեր համաձայնությունը՝ օգտագործելով մեր Գաղտնիության հայտի լրացման ձևաթուղթը մեր Կապ հաստատեք մեզ հետ էջում: Ձեր համաձայնությունը հետ վերցնելը չի ազդում նախքան այդ եղած տվյալների մշակման օրինականության վրա:

4. ՔՈՒՔԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

[Ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ [մուտքագրել]
Այս Քուքիների մասին ծանուցագիրը լրացնում է մեր Սպառողների գաղտնիության վերաբերյալ գլոբալ ծանուցագիրը: Խնդրում ենք կարդալ Սպառողների գաղտնիության վերաբերյալ գլոբալ ծանուցագիրը մեր գաղտնիության կիրառությունների ամբողջական նկարագրության համար:]

Մեր Ծառայություններում մենք օգտագործում ենք քուքիներ, վեբ փարոսներ, պիքսելային թեգեր և նմանատիպ տեխնոլոգիաներ (հավաքական անվանումը՝ «Քուքիներ»): Այս Քուքիների մասին ծանուցագիրը բացատրում է, թե ինչ է իրենից ներկայացնում քուքին, ինչ տեսակի քուքիներ ենք օգտագործում և ինչպես կարող եք կառավարել Ձեր քուքիները՝ կախված Ձեր գտնվելու վայրից: Մեր որոշ կայքէջեր կամ հավելվածներ կարող են ենթակա լինել այլ քուքիների ծանուցագրի, որոնց համար կտրվի ուղիղ հղում:

Մեր կողմից օգտագործվող քուքիները տարբերվում են՝ կախված Ձեր գտնվելու վայրից և Ձեր կողմից օգտագործվող Ծառայությունից: Խնդրում ենք ստուգել Ձեր կողմից օգտագործված Ծառայության Քուքիների գործիքը առավել մանրամասներին ծանոթանալու համար, ըստ անհրաժեշտության:

<u>Ի՞նչ են քուքիները:</u> Քուքիները փոքր տեքստային ֆայլեր են, որոնք պահվում են Ձեր համակարգչում, բջջային հեռախոսում կամ այլ սարքում, որն օգտագործում եք կայքէջ, հավելված այցելելիս կամ սեղմում եք որոշակի շուկայավարման էլ.փոստերի հղումների վրա: Պիքսելները թափանցիկ պատկերներ են, որոնք կարող են տեղեկություններ հավաքել էլեկտրոնային փոստի բացումների և կայքէջերի օգտագործման վերաբերյալ կայքէջերում և ժամանակի ընթացքում:

Քուքիները լինում են կա՛մ մշտական, կա՛մ աշխատաշրջանի քուքիներ: Մշտական քուքիները մնում են Ձեր սարքում մինչև դրանց ժամկետի լրանալը կամ Ձեր կողմից դրանց ջնջելը՝ վերլուծելով սպառողի վարքագիծը: Աշխատաշրջանի քուքիները ժամանակավոր են և ժամկետը լրանում է, երբ փակում եք Ձեր զննարկիչը՝ հետևելով Ձեր այցելության ընթացքում Ձեր գործունեությանը:

Քուքիները կարող են լինել կա՛մ հիմնական, կա՛մ երրորդ կողմի: Հիմնական քուքիները տրամադրվում են Կոկա-Կոլայի կողմից: Երրորդ կողմի քուքիները տրամադրվում են այլ կողմերից՝ վերլուծության և շուկայավարման ավտոմատացման համար և կարող են ճանաչել Ձեր սարքը տարբեր կայքէջերում:

<u>Ի՞նչ տեսակի տեղեկություններ են հավաքում քուքիները:</u> Քուքիները սովորաբար ներառում են տիրույթի անունը (ինտերնետային գտնվելու վայրը), որից դրանք առաջացել են, ժամկետի ավարտը և եզակի նույնականացուցիչը: Դրանք նաև պահպանում են Ձեր սարքի մասին տեղեկություններ, ինչպիսիք են դրա կարգավորումները, զննարկման պատմությունը և մեր Ծառայություններից օգտվելիս կատարած գործողությունները:

<u>Ի՞նչ տեսակի քուքիներ են օգտագործվում Կոկա-Կոլայի ծառայություններում և ինչո՞ւ ենք մենք դրանք օգտագործում:</u> Կախված նրանից, թե ինչպես եք օգտագործում մեր Ծառայությունները, մենք կարող ենք օգտագործել հետևյալ տեսակի քուքիները՝

- **Խիստ անհրաժեշտ քուքիները** հնարավորություն են տալիս մեր Ծառայություններին գործել և չեն կարող անջատվել: Նրանք արձագանքում են Ձեր հարցումներին, ինչպիսիք են գաղտնիության կարգավորումները սահմանելը, մուտք գործելը կամ ձևաթղթերը լրացնելը:
- **Վերլուծական քուքիներն** ակտիվորեն հետևում են, թե ինչպես են օգտագործվում մեր Ծառայությունները՝ հաշվելով այցելությունները և երթևեկի աղբյուրները՝ մեր Ծառայությունները բարելավելու նպատակով կատարողականն ու օգտագործումը վերլուծելու համար: Այս քուքիները մնում են Ձեր սարքում մինչև Ձեր կողմից դրանց ջնջելը:
- **Գովազդային քուքիները** տեղադրվում են մեր կամ մեր երրորդ կողմի գործընկերների կողմից և կիսվում են տեղեկատվությամբ՝ Ձեր զննարկչի պրոֆիլի հիման վրա Ձեր հետաքրքրություններին համապատասխանող պրոֆիլ կազմելու համար և թույլ են տալիս մեզ ցուցադրել Ձեր ենթադրյալ հետաքրքրություններին համապատասխանող գովազդներ, կանխել կրկնվող գովազդները և ապահովել գովազդատուների համար գովազդի պատշաճ ներկայացումը:
- **Անհատականացման քուքիները** տեղադրվում են մեր կամ մեր երրորդ կողմի մատակարարների կողմից, ովքեր մեր կայքերին ավելացնում են գործառույթներ և հնարավորություններ (օրինակ՝ տեսանյութեր) և կիսվում են տեղեկատվությամբ՝ օգնելու անհատականացնել Ձեր փորձը մեր կայքում՝ օգտագործելով համապատասխան բովանդակություն (օրինակ՝ տեսանյութեր) կամ Ձեզ հետաքրքրող պրոդուկտներ (օրինակ՝ հիմնվելով Ձեր նախկինում դիտածի վրա): Դրանք կարող են ներառել, օրինակ՝ լեզվի կամ դասավորության նախընտրությունները, զննարկչով խաղում խաղի պահպանումը այնտեղից, որտեղ դուք կանգ եք առել, կամ Ձեր մուտքանունը կամ սիրելի ապրանքները հիշելը: Որոշ գործառույթներ և հնարավորություններ կարող են չաշխատել, եթե Անհատականացման քուքիները չեն ընդունվում:
- **Սոցիալական մեդիա քուքիները** թույլ են տալիս սոցիալական ցանցերին կիսվել բովանդակությամբ ընկերների և ցանցերի հետ (օրինակ՝ կիսվելու կոճակ): Սոցիալական ցանցը գրանցում է այս գործողությունը, որը կարող է կապված լինել թիրախավորման և գովազդային գործունեության հետ:

Կախված Ձեր իրավասության սահմաններից, մշակման կոնկրետ նպատակներն ու իրավական հիմքերը կարող են տարբեր լինել: Մենք կարող ենք մշակել քուքիներից և նմանատիպ տեխնոլոգիաներից ստացված տվյալները՝ կիրառելի տեղական տվյալների պաշտպանության օրենքներով ճանաչված իրավական հիմքերով, որոնք կարող են ընդգրկել օրինական շահերը, պայմանագիր կնքելու կամ կատարելու անհրաժեշտությունը կամ Ձեր համաձայնությունը:

<u>Ի՞նչ տեղեկություններ ենք մենք հավաքում և կիսվում երրորդ կողմերի հետ:</u> Օրենքով թույլատրված դեպքերում մենք կարող ենք Ձեր մասին տվյալներ հավաքել երրորդ կողմերից, այդ թվում՝ տվյալների վերլուծության մատակարարներից, ինչպիսիք են Google Analytics-ը, YouTube-ը, Facebook-ը, Instagram-ը, Messenger-ը, Facebook Apps-ը և TikTok-ը, երբ օգտագործում եք մեր Ծառայությունները կամ երրորդ կողմի կայքէջը: Օրինակ՝ երբ սեղմում եք մեր գովազդներից մեկի վրա երրորդ կողմի կայքէջում, կամ երբ օգտագործում եք մեր Ծառայություններում ներդրված գործառույթ, ինչպիսիք են ներդրված YouTube տեսանյութը կամ մեր սոցիալական ցանցերի հաշիվների կամ դրանց հղումները, կամ երբ բացում եք մեր կողմից Ձեզ ուղարկված շուկայավարման էլ. նամակը:

Երրորդ կողմերն օգտագործում են Քուքիներ՝ այցելուներին հետևելու և մեր անունից սպառողների վերաբերյալ տեղեկատվություն (այդ թվում անձնական տեղեկատվություն) հավաքելու և այն մեզ հետ կիսվելու և/կամ իրենց սեփական նպատակների համար, օրինակ՝ իրենց սեփական պրոդուկտներն ու ծառայությունները բարելավելու կամ ժամանակի ընթացքում տարբեր կայքէջերում և առցանց ծառայություններում Ձեր մասին տեղեկատվություն հավաքելու համար:

Քուքիների մասին տեղեկատվությունը, որը մենք հավաքում ենք երրորդ կողմերից, կարող է ընդգրկել, օրինակ՝ Ձեր IP հասցեն, զննարկչի տվյալները, սարքի կարգավորումները, ընթացիկ URL-ը, կայքէջի կամ էլ. փոստի փոխազդեցությունները և նախկինում այցելած վեբ էջերը: Այս տվյալներն օգնում են Կոկա-Կոլային վերլուծել օգտագործումը և ներգրավվածությունը, ինչպես նաև անհատականացնել շուկայավարումն ու գովազդները: Մենք կարող ենք նաև համատեղել այս տեղեկատվությունն անձնական նախասիրությունները գնահատելու, վերլուծելու կամ կանխատեսումներ կատարելու համար: Երրորդ կողմերից հավաքագրվող այլ տեղեկությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Ինչ տեսակի անձնական տվյալներ ենք մենք հավաքում բաժինը:

Մենք կարող ենք կիսվել քուքիների հետ կապված տվյալներով ընտրված ծառայության մատակարարների, բիզնես գործընկերների, համապատասխան պետական մարմինների հետ կամ ինչպես այլ կերպ է նշված մեր Սպառողների գաղտնիության վերաբերյալ գլոբալ ծանուցագրում, միայն գործող օրենսդրությամբ թույլատրված կամ պահանջվող նպատակների համար:

<u>Քուքիների ընտրություն</u>. Ձեր գտնվելու վայրից կախված՝ կարող եք մերժել քուքիները՝ կարգավորելով կարգավորումները Ձեր զննարկչում կամ մեր Քուքիների գործիքում:

Զննարկիչների մեծ մասն ավտոմատ եղանակով ընդունում է Քուքիները, սակայն կարող եք կարգավորել Ձեր զննարկիչը՝ ցանկացած պահի մերժելու կամ ջնջելու այն Քուքիները, որոնք խստիվ անհրաժեշտ չեն: Նկատի ունեցեք, որ մեր Ծառայությունների որոշ գործառույթներ կարող են պատշաճ կերպով չաշխատել, եթե որոշակի Քուքիներ անջատված են: Յուրաքանչյուր զննարկիչ տարբեր է, ուստի կարգավորումները փոփոխելու համար օգտվեք Օգնության ընտրացանկից կամ Ձեր զննարկչի կողմից տրամադրված հրահանգներից:

Ընդհանուր առմամբ Քուքիների մասին ավելին իմանալու համար, այցելե՛ք հետևյալ հասցե՝ www.allaboutcookies.org: Կարող եք նաև գտնել լրացուցիչ տեղեկություններ այն մասին, թե ինչպես են երրորդ կողմերն օգտագործում Ձեր տվյալները՝ անմիջապես այցելելով նրանց գաղտնիության վերաբերյալ ծանուցագրերը:

Կարող եք լրացուցիչ ընտրություններ ունենալ Ձեր անձնական տվյալների և մեր կողմից քուքիների օգտագործման վերաբերյալ: Խնդրում ենք ծանոթանալ մեր Սպառողների գաղտնիության վերաբերյալ գլոբալ ծանուցագրին կամ Կապ հաստատեք մեզ հետ:

5. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԿԻՍՈՒՄ

Մենք կիսում ենք անձնական տվյալները ստացողների հետևյալ խմբերի հետ՝

- **Մասնագիտական խորհրդատուներ**, ինչպիսիք են իրավաբանները, հաշվապահները, ապահովագրողները և տեղեկատվական անվտանգության և դատաբժշկական փորձագետները:
- **Ծառայության մատակարարներին** հնարավորություն տալ ծառայություններ իրականացնել մեր անունից, այդ թվում՝ շուկայավարման մատակարարներ, գովազդային գործակալություններ, ամպային պահեստավորման լուծումներ, վճարային մշակողներ, տեխնոլոգիական մատակարարներ, կայքէջերի և տվյալների հոսթինգ, պրոդուկտների և Ծառայությունների մատակարարում, տվյալների վերլուծություն, տվյալների անվտանգություն, էլեկտրոնային առևտրի գործողություններ, հարցումներ, հետազոտություններ, ակցիաների, առաջարկների և հավատարմության ծրագրերի կառավարում և այլ ծառայություններ՝ օգնելու մեզ իրականացնել մեր գործունեությունը: Սա ընդգրկում է անձնական տվյալները և կեղծանունով ներկայացված տվյալները, օրինակ՝ տվյալների «մաքուր սենյակների» օգտագործման ժամանակ՝ լսարանի հայտնաբերման, ընդլայնման, թիրախավորման և նման լսարանի մոդելավորման նպատակով:
- **Երրորդ կողմի առցանց գովազդային ցանցեր, սոցիալական մեդիա ընկերություններ և այլ երրորդ կողմի ծառայություններ**՝ ժամանակի ընթացքում Ձեր կողմից մեր Ծառայությունների օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար, որպեսզի նրանք կարողանան գովազդներ նվագարկել կամ ցուցադրել Ձեր կողմից օգտագործվող այլ սարքերում, հավելվածներում և հարթակներում:
- **Բիզնես գործընկերներ** (համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության)՝ Ձեզ լրացուցիչ առաջարկներ տրամադրելու, մեր գործընկերներից ստացված տեղեկատվությանը մուտք գործելու և շուկայավարման նպատակներով:
- **Հնարավոր կամ փաստացի ձեռքբերողները կամ ներդրողները** և նրանց պրոֆեսիոնալ խորհրդատուները՝ կապված մեր բիզնեսի ամբողջ կամ որևէ մասի որևէ փաստացի կամ առաջարկվող միաձուլման, ձեռքբերման կամ ներդրման հետ:
- **Կոկա-Կոլայի դուստր ձեռնարկություններին և շշալցման գործընկերներին**՝ Ձեզ տարբեր շուկայավարման տեղեկատվություն, գովազդային միջոցառումներ և ինտերակտիվ խաղեր տրամադրելու համար:
- **Իրավասու իրավապահները, պետական կարգավորող մարմինները և դատարանները,** երբ կարծում ենք, որ բացահայտումն անհրաժեշտ է օրենքին (i) համապատասխանելու համար, (ii) օրինական իրավունքներն իրականացնելու, հաստատելու կամ պաշտպանելու համար, կամ (iii) Կոկա-Կոլայի, մեր սպառողների, գործընկերների, ծառայության մատակարարների կամ այլ երրորդ կողմի իրավունքները, սեփականությունը և անվտանգությունը պաշտպանելու համար:

- **Մեր Ծառայությունների այցելուները**: Եթե Դուք մեր Ծառայություններում բովանդակություն եք տարածում, Ձեր տարածած բովանդակությունը կարող են տեսնել մեր Ծառայությունների այլ այցելուները: Մենք պատասխանատվություն չենք կրում այն տեղեկատվության համար, որն ընտրում եք ներկայացնել այս հանրային վայրերում:
- **Այլ երրորդ կողմեր** Ձեր թույլտվությամբ կամ Ձեր պահանջով:

Եթե մենք կիսվում ենք անձնական տվյալներով, ապա պահանջում ենք, որ ստացողները մշակեն անձնական տվյալներն այս ծանուցագրին համապատասխան, հետևեն գաղտնիության մասին գործող օրենքներին և օգտագործեն Ձեր անձնական տվյալները միայն այն նպատակով, որի համար այն կիսվել է:

6. ԻՆՉՊԵ՞Ս ԵՆՔ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Կոկա-Կոլան հոգ է տանում՝ ապահովելու և պաշտպանելու մեզ վստահված անձնական տվյալները: Մենք կիրառում ենք տեխնիկական, ֆիզիկական և վարչական պաշտպանության միջոցներ, որոնք նախատեսված են մեր կողմից մշակվող անձնական տվյալները պաշտպանելու և Ձեր անձնական տվյալների կորստի, չարաշահման, չարտոնված մուտքի, բացահայտման կամ փոփոխման վտանգը նվազեցնելու համար: Մենք պարբերաբար փորձարկում, գնահատում, վերլուծում և թարմացնում ենք մեր անվտանգության միջոցառումները, սակայն կիբերանվտանգության ռիսկերի բնույթի պատճառով մենք չենք կարող լիովին վերացնել անձնական տվյալների մշակման հետ կապված անվտանգության ռիսկերը:

Դուք պատասխանատվություն եք կրում Ձեր գաղտնաբառերի պաշտպանության և Ձեր սարքերի անվտանգության պահպանման համար: Ձեր հաշվի մուտքի տվյալներով մեր ծառայություններ մուտք գործելը Կոկա-Կոլան համարում է Ձեր կողմից լիազորված:

Կոկա-Կոլան կարող է կասեցնել Ձեր կողմից մեր Ծառայությունների ամբողջական կամ մասնակի օգտագործումն առանց ծանուցագրի, եթե կասկածենք կամ հայտնաբերենք անվտանգության որևէ խախտում: Եթե կարծում եք, որ Կոկա-Կոլային տրամադրած տեղեկատվությունը կամ Ձեր հաշիվն այլևս անվտանգ չեն, խնդրում ենք Կապ հաստատեք մեզ հետ:

Եթե տեղյակ լինենք խախտման մասին, որն ազդում է Ձեր անձնական տվյալների անվտանգության վրա, մենք ծանուցագրով կտեղեկացնենք Ձեզ և տվյալների պաշտպանության որևէ համապատասխան կարգավորող մարմնին, ինչպես պահանջվում է գործող օրենսդրությամբ: Եթե դա թույլատրվում է կիրառելի օրենքով, ապա Կոկա-Կոլան Ձեզ կտրամադրի այս ծանուցագիրը՝ օգտագործելով Ձեր հաշվի հետ կապված էլեկտրոնային փոստի հասցեն կամ Ձեր հաշվի հետ կապված այլ թույլատրելի մեթոդ:

7. ՈՐՔԱ՞Ն ԺԱՄԱՆԱԿ ԵՆՔ ՊԱՀՈՒՄ ՁԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Եթե մեզ հատուկ չեք խնդրում ջնջել Ձեր անձնական տվյալները, մենք պահպանում ենք Ձեր անձնական տվյալներն այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ է մեր Ծառայությունները տրամադրելու, մեր տվյալների պահպանման քաղաքականությանը և կիրառելի իրավական պահանջներին համապատասխանելու, վեճերը լուծելու և մեր համաձայնագրերը կիրառելու համար:

Համապատասխան պահպանման ժամկետը որոշելիս մենք հաշվի ենք առնում տարբեր չափանիշներ, ինչպիսիք են՝

- Որքա՞ն ժամանակ է պահանջվում, որպեսզի տվյալների գրառումը Ձեզ տրամադրի Ձեր պահանջած Ծառայությունները (օրինակ՝ թվային շուկայավարման փորձի շրջանակներում տրամադրված լուսանկարներն ու տեսանյութերը պահպանվում են միայն շուկայավարման ակցիայի ավարտից հետո սահմանափակ ժամանակահատվածում),
- Որքա՞ն ժամանակ է պահանջվում, որպեսզի տվյալների գրառումը աջակցի և բարելավի մեր գործառնական գործընթացները,
- Որքա՞ն ժամանակ է պահանջվում, որպեսզի տվյալների գրառումը պաշտպանի մեր իրավունքներն ու օրինական շահերը, և
- Որքա՞ն ժամանակ պետք է պահպանվի տվյալների գրառումը՝ համապատասխանելու գործող օրենքներին և կանոնակարգերին (օրինակ՝ տվյալների սուբյեկտի հարցումների գրառումների պահպանում):

Համապատասխան պահպանման ժամկետի ավարտից հետո մենք կա՛մ ջնջում, կա՛մ անանունացնում ենք անձնական տվյալները, կամ եթե չենք կարողանում ջնջել կամ անանունացնել անձնական տվյալները, ապա մենք ապահով կերպով պահում ենք անձնական տվյալները, մինչև հնարավոր կլինի ջնջելը կամ անանունացնելը: Անանունացված տվյալներն այլևս անձնական տվյալներ չեն, սակայն մենք դրանք դեռևս մշակում ենք գործող օրենքների և պայմանագրերի համաձայն:

Մենք նաև իրավունք ենք վերապահում ջնջել Ձեր անձնական տվյալները, եթե Դուք այլևս ակտիվ հաշվի օգտատեր չեք կամ եթե հայտնաբերենք խարդախ գործունեություն:

8. ՁԵՐ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դուք կարող եք ընտրություն կատարել Կոկա-Կոլայի կողմից Ձեր անձնական տեղեկությունների մշակման վերաբերյալ: Կարող եք կառավարել Ձեր գաղտնիության կարգավորումները՝ օգտագործելով Ձեր զննարկչի միջոցով հասանելի տարբեր գործիքներ կամ Կոկա-Կոլայի կողմից Ձեզ համար հասանելի դարձված գործիքներ՝ կախված Ձեր իրավասության սահմաններից, և կարող եք Կապ հաստատել մեզ հետ: Որոշ դեպքերում Ձեր անձնական տվյալներ մուտք գործելու կամ վերահսկելու Ձեր հնարավորությունը սահմանափակված է կիրառելի օրենքով:

Կիրառեք Ձեր գաղտնիության ընտրության հնարավորությունները. Կախված Ձեր բնակության վայրից, հավաքված անձնական տվյալների տեսակից և որոշակի բացառություններից՝ կարող եք ունենալ ընտրության հնարավորություններ Ձեր անձնական տվյալների վերաբերյալ, և այդ ընտրության հնարավորություններից մի քանիսը ենթակա են բացառությունների և սահմանափակումների: Կարող ենք նաև տրամադրել Ձեզ այս ընտրությունների հնարավորությունները, նույնիսկ եթե պարտավոր չենք անել դա գործող օրենսդրությամբ.

- **Եղեք տեղեկացված**. Կարող եք տեղեկատվություն խնդրել այն մասին, թե ինչպես են մշակվում Ձեր անձնական տվյալները: Որոշ վայրերում կարող եք տեղեկություններ խնդրել այն երրորդ կողմերի ինքնության վերաբերյալ, որոնց փոխանցվել են Ձեր տվյալները:
- **Մատչելիություն**. Կարող եք դիմել Ձեր անձնական տվյալներին մատչելիություն ունենալու համար:
- **Ուղղում կամ շտկում**. Կարող եք պահանջել սխալ կամ թերի անձնական տվյալների ուղղում:
- **Ջնջում**. Կարող եք խնդրել Ձեր անձնական տվյալների ջնջում:

- **Սահմանափակել մշակումը**. Կարող եք պահանջել, որ սահմանափակենք Ձեր անձնական տվյալների մշակումը որոշակի դեպքերում (օրինակ՝ պրոֆիլավորում, ավտոմատ որոշումների կայացում, որն առաջացնում է իրավական կամ նմանատիպ նշանակալի հետևանքներ):
- **Տվյալների դյուրակրություն**. Կարող եք խնդրել ստանալ Ձեր անձնական տվյալները մեքենայական ընթերցման ձևաչափով կամ խնդրել մեզ ուղարկել դրանք մեկ այլ վերահսկիչի:
- **Համաձայնությունն առարկելը կամ այն հետ վերցնելը**. Կարող եք ցանկացած պահի առարկել Ձեր անձնական տվյալների մշակմանը կամ հետ վերցնել Ձեր համաձայնությունը (օրինակ՝ շուկայավարման նպատակով):

Եթե օգտվեք այս գաղտնիության ընտրության հնարավորություններից, Դուք իրավունք ունեք չարժանանալ որևէ խտրական վերաբերմունքի կամ հաշվեհարդարի: Այլ բան նշված չլինելու դեպքում մենք կպատասխանենք Ձեր հարցումներին մեր իսկ ծախսերով:

<u>Հայտերի ներկայացում</u>. Ձեր գաղտնիության ընտրության հնարավորություններն իրականացնելու և գաղտնիության հարցման ձևաթուղթ ներկայացնելու համար խնդրում ենք <u>Կապ հաստատել մեզ հետ</u>: Ձեր հարցումը ներկայացնելիս, Ձեզանից կարող է պահանջվել տրամադրել որոշ անձնական տեղեկություններ (օրինակ՝ անուն, էլեկտրոնային փոստի հասցե, բնակության վայր, նույնականացման (ID) համար), որպեսզի կարողանանք լրացնել Ձեր հարցումը: Մենք նպատակ ունենք հարցումները կատարել հնարավորինս շուտ գործնականում կիրառելի ժամանակում և համապատասխան կիրառելի օրենքներին: Եթե մեզ մոտ հաշիվ ունեք, կարող եք նաև որոշակի փոփոխություններ կատարել անմիջապես Ձեր հաշվի պրոֆիլի էջի միջոցով: Խնդրում ենք նկատի ունենալ, որ մեր Ծառայությունների միջոցով Ձեր հաշվի պրոֆիլի էջում կատարած փոփոխությունները միշտ չէ, որ կարող են արտացոլվել մեր կողմից սպասարկվող մեր Ծառայությունների այլ մասերում:

Ձեր հարցումը ներկայացնելիս խնդրում ենք նկատի ունենալ.

- Ձեր գաղտնիության հարցմանը պատասխանելուց առաջ մենք կարող ենք անհրաժեշտություն ունենալ ստուգելու Ձեր ինքնությունը: Ձեր հարցումը ստանալուց և մշակելուց հետո մենք կապ կհաստատենք Ձեզ հետ՝ օգտագործելով Ձեր հարցման մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեն՝ հրահանգներով Ձեր ինքնությունը ստուգելու համար, որից հետո մենք կստուգենք մեր գրառումները՝ համապատասխան տեղեկատվության համար:
- Մենք կարող ենք չկատարել Ձեր հարցումը մասամբ կամ ամբողջությամբ. օրինակ՝ մեր կողմից հավաքագրված որոշակի տեղեկություններ կարող են ազատված լինել ջնջման հարցումներից, ինչպիսիք են կառավարության կողմից կամ այլ իրավական պատճառներով տրամադրված հանրային տվյալները: Այս իրավիճակներում մենք կբացատրենք, թե ինչու չենք բավարարում Ձեր հարցումը Ձեզ պատասխանելիս, կամ եթե մեզ անհրաժեշտ է պահպանել որոշակի անձնական տվյալներ՝ գրառումների պահպանման նպատակներով և/կամ Ձեր հարցումը ներկայացնելուց առաջ Ձեր կողմից սկսված որևէ գործարքն ավարտելու համար (օրինակ՝ երբ գնում եք կատարում կամ մասնակցում եք ակցիայի, ապա հնարավոր է չկարողանաք փոխել կամ ջնջել տրամադրված անձնական տվյալները մինչև գնման կամ ակցիայի ավարտը):
- Եթե առարկում եք Ձեր անձնական տվյալների մշակմանը կամ հետ եք վերցնում Ձեր համաձայնությունը, ապա Ձեր ինքնությունը հաստատելուց հետո մենք անմիջապես կդադարեցնենք Ձեր անձնական տվյալների հավաքագրումն ու մշակումը:

- Եթե մեզ խնդրեք ջնջել Ձեր տվյալները, ապա մենք դա կանենք միայն Ձեր ինքնությունը հաստատելուց հետո: Գործող օրենսդրության և անվտանգության տեխնոլոգիաների սահմանափակումների պատճառով մենք, հնարավոր է, անմիջապես չկարողանանք ջնջել պահուստային համակարգում պահվող համապատասխան տեղեկատվությունը: Մենք անվտանգ կերպով կպահպանենք Ձեր անձնական տվյալները և կսահմանափակենք դրանց ցանկացած մշակում, մինչև հնարավոր լինի դրանք հեռացնել պահուստային համակարգից:
- Որոշ վայրերում մենք պարտավոր ենք յուրաքանչյուր տարի պատասխանել միայն սահմանափակ թվով Ձեր հարցումների և կարող ենք սահմանափակվել մեր կողմից բացահայտվող անձնական տվյալներով:
- Մենք կպահպանենք Ձեր գաղտնիության վերաբերյալ բոլոր հարցումները մեր պահպանման քաղաքականությանը համապատասխան, և այս տվյալները չեն օգտագործվի որևէ այլ նպատակի համար, բացառությամբ համապատասխանության գործընթացները վերանայելուց կամ իրավական պարտավորությանը համապատասխանելուց:
- Ձեր անձնական տվյալների տրամադրումը կամավոր է, սակայն անհրաժեշտ է մեր ծանուցագրում նկարագրված նպատակները կատարելու համար: Նմանատիպ անձնական տվյալների տրամադրումից հրաժարվելը կարող է մասամբ կամ ամբողջությամբ խոչընդոտել ծառայությունների տրամադրմանը, ինչպես նաև սահմանափակել Ձեր մասնակցությունը որոշ հնարավորությունների կամ արտոնությունների առումով:

<u>Գործակալի կամ ներկայացուցչի հարցումներ</u>. Ձեր բնակության վայրից կախված՝ կարող եք լիազորել գործակալի կամ այլ ներկայացուցչի՝ Ձեր փոխարեն գաղտնիության հարցումներ կատարելու համար: Մենք կարող ենք խնդրել Ձեզ անմիջապես հաստատել այս լիազորությունը: Հաստատվելուց հետո Ձեր գործակալը կամ ներկայացուցիչը կարող է գործել Ձեր անունից՝ օրենքով սահմանված կարգով: Գործակալների և ներկայացուցիչների հարցումների մշակումը կարող է ավելի երկար տևել:

<u>Այլ կոնտակտային տեղեկություններ (օրինակ՝ Տվյալների գծով վերահսկիչ, բողոքարկման մարմին, վերահսկող մարմին)</u>. Խնդրում ենք այցելել մեր <u>Կապ հաստատել մեզ հետ</u> էջը՝ իրավասության վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ ստանալու համար: Օրինակ՝ կախված Ձեր բնակության վայրից, Դուք կարող եք իրավունք ունենալ բողոքարկելու հարցման վերաբերյալ որոշումը, բողոք ներկայացնելու այլ մարմնին կամ գտնելու Ձեր տեղական տվյալների վերահսկիչի, տվյալների գծով պաշտպանության պատասխանատուի, վերահսկող մարմնի, տվյալների պաշտպանության մարմնի կամ կարգավորող մարմնի համապատասխան կոնտակտային տեղեկությունները:

<u>Անբավարար տեղեկատվություն և մերժված հարցումներ</u>. Որոշ անձնական տվյալներ, որոնք պահպանում ենք, բավարար չափով ճշգրիտ չեն, որպեսզի կարողանանք դրանք կապել ստուգված սպառողի հետ (օրինակ՝ տվյալներ, որոնք կապված են միայն կեղծանունով զննարկչի ID-ի հետ): Մենք այդ անձնական տվյալները չենք ընդգրկում այդ հարցումներին ի պատասխան: Եթե մերժենք հարցումը՝ ամբողջությամբ կամ մասամբ, Կոկա-Կոլան մեր պատասխանում կբացատրի պատճառները և կտրամադրի Ձեզ տեղեկություններ, թե ինչպես բողոքարկել կամ մերժման վերաբերյալ բողոք ներկայացնել, անհրաժեշտության դեպքում:

ԿԱՌԱՎԱՐԵԼ ՁԵՐ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

<u>Գաղտնիության գլոբալ վերահսկում</u>. Գաղտնիության գլոբալ վերահսկումը (GPC) զննարկչի կարգավորում է, որը թույլ է տալիս օգտատերերին ազդանշան տալ կայքէջերին այն մասին, որ

չեն ցանկանում, որպեսզի իրենց անձնական տվյալները վաճառվեն կամ կիսվեն: Կարող եք ավելին իմանալ դրանց մասին Ձեր վեբ զննարկչի մատակարարից: Մենք ունենք գործիքներ՝ GPC-ի ազդանշանի միջոցով կատարված հարցումներն ավելի լավ հայտնաբերելու և բավարարելու համար, որոնք վերաբերում են անձնական տվյալների փոխանակումից հրաժարվելու խնդրանքներին՝ գործող օրենսդրությամբ պահանջվող ծավալով: Չնայած մենք ձգտում ենք բավարարել GPC ազդանշանին կապված ցանկացած անձնական տվյալի վերաբերյալ այս հարցումները, մենք չենք կարող կապել Ձեր GPC ազդանշանին կապված տեղեկատվությունը Ձեր մասին մեր ունեցած բոլոր անձնական տվյալների հետ: Այս կարգավորումները տարբերվում են մեր Քուքիների գործիքում առկա կարգավորումներից:

Բջջային սարքի նախապատվություններ. Բջջային գործավարական համակարգերը և հավելվածների հարթակները (ինչպիսիք են՝ Google Play, App Store) ունեն թույլտվության կարգավորումներ շարժական սարքի տվյալների և ծանուցագրերի հատուկ տեսակների համար, ինչպիսիք են կոնտակտների հասանելիությունը, աշխարհագրական դիրքի ծառայությունները և փուշ ծանուցումները: Դուք կարող եք օգտագործել Ձեր բջջային սարքի կարգավորումները՝ համաձայնելու կամ մերժելու որոշակի տեղեկատվության հավաքագրումը և փուշ ծանուցումները: Հավելվածի որոշ կարգավորումներ թույլ են տալիս նաև փոխել թույլտվությունները և փուշ ծանուցման կարգավորումները: Որոշ հավելվածների համար կարգավորումների փոփոխությունը կարող է հանգեցնել հավելվածի որոշակի ասպեկտների պատշաճ չաշխատելուն: Դուք կարող եք դադարեցնել բոլոր տեղեկությունների հավաքումը հավելվածից՝ ապատեղադրելով հավելվածը: Եթե ապատեղադրեք հավելվածը, խնդրում ենք նաև ստուգել Ձեր գործավարական համակարգի կարգավորումները՝ հաստատելու, որ եզակի նույնացուցիչը և Ձեր հավելվածի օգտագործման հետ կապված այլ գործողությունները ջնջված են Ձեր շարժական սարքից:

Հրաժարում Կոկա-Կոլայի էլեկտրոնային նամակներից և տեքստային հաղորդագրություններից. Որպեսզի դադարեցնեք Կոկա-Կոլայից ակցիայի բնույթ ունեցող նամակներ ստանալը, սեղմեք էլեկտրոնային փոստի ներքևում գտնվող «Դուրս գալ բաժանորդագրությունից» հղումը: Հրաժարվելուց հետո մենք դեռ կարող ենք Ձեզ ուղարկել ակցիայի բնույթ չունեցող հաղորդագրություններ, ինչպիսիք են գնումների անդորրագրերը կամ Ձեր հաշվին վերաբերող վարչական տեղեկություններ: Ձեր հաշվի կարգավորումները նաև կարող են Ձեզ թույլ տալ փոխել Ձեր ծանուցումների նախապատվությունները, ինչպես, օրինակ՝ փուշ ծանուցումները Հավելվածից: Ակցիայի բնույթ ունեցող տեքստային հաղորդագրություններ (SMS կամ MMS) չստանալու համար խնդրում ենք ուղարկել պատասխան տեքստային հաղորդագրություն՝ նշելով, որ ցանկանում եք դադարեցնել ակցիայի բնույթ ունեցող տեքստային հաղորդագրությունների ստացումը մեզանից, օրինակ ուղարկելով «Դադարեցնել» բառը: Կարող եք նաև Կապ հաստատել մեզ հետ մեզ տեղեկացնելու համար: Խնդրում ենք նշել, թե որ տեսակի հաղորդագրություններն այլևս չեք ցանկանում ստանալ համապատասխան հեռախոսահամարի, հասցեի և/կամ էլփոստի հասցեի հետ միասին: Եթե հրաժարվեք մեզանից մարքեթինգի հետ կապված հաղորդագրություններ ստանալ, մենք կարող ենք Ձեզ ուղարկել կարևոր վարչական հաղորդագրություններ, ինչպիսիք են Ձեր հաշիվների կամ գնումների մասին էլ.նամակներ:

Կառավարել քուքիների նախընտրությունները. Տե՛ս «Ինչպես կառավարել քուքիները» բաժինը Քուքիների մասին ծանուցագիր բաժնում՝ վերանայելու այն ընտրության հնարավորությունները, որոնք ունեք Քուքիների օգտագործման վերաբերյալ, ներառյալ Քուքիների գործիքից օգտվելը:

Չեղարկել Ձեր հաշիվը. Դուք կարող եք չեղարկել Ձեր գրանցված հաշիվը մուտք գործելուց հետո ցանկացած պահի: Ձեր հաշիվը չեղարկելու հարցումը ստանալուց հետո մենք չենք կարող

երաշխավորել, որ համապատասխան տեղեկատվությունն անմիջապես կջնջվի պահուստային համակարգից: Այնուամենայնիվ, նման տեղեկատվությունը կջնջվի պահուստային համակարգի թարմացման ժամանակ, եթե օրենքներով և կանոնակարգերով այլ բան նախատեսված չէ:

9. ՏՎՅԱԼՆԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եթե մեր ծառայություններից որևէ մեկում այլ բան հստակ նշված չէ, Կոկա-Կոլա ընկերությունը գիտակցաբար չի հավաքում 13 տարեկանից փոքր երեխաների անձնական տվյալներ կամ գործող տեղական օրենքներով սահմանված կարգով (օրինակ՝ 14 տարեկանից փոքր՝ մայրցամաքային Չինաստանի կամ 18 տարեկանից փոքր՝ Հնդկաստանի համար)՝ առանց պահպանելու երիտասարդների տվյալների մշակման սահմանափակումները (օրինակ՝ ստանալով օրենքով պահանջվող ծնողի համաձայնությունը): Մեր Պատասխանատու շուկայավարման քաղաքականության համաձայն՝ «Մեր նվազագույն տարիքային շեմը 13-ն է: Մեր շուկայավարման արշավները որևէ դեպքում ուղղակիորեն նպատակաուղղված չեն 13 տարեկանից փոքր երեխաներին: Մենք հարգում և կիրառում ենք բոլոր տեղական կանոնակարգերը, որոնք սահմանում են երեխաների ավելի բարձր տարիքային շեմը»:

Մեր ծառայություններից որոշներն ունեն տարիքային սահմանափակումներ՝ ապահովելու, որ համապատասխանենք գործող օրենքներին, օրինակ՝ որոշ իրավասություններում երեխաներին թույլատրվում է օգտվել մեր ծառայություններից միայն ծնողի կամ խնամակալի ստուգելի համաձայնությամբ: Եթե իմանանք, որ հավաքել կամ ստացել ենք երեխայից անձնական տվյալներ՝ առանց անհրաժեշտ համաձայնության կամ գործող օրենքներով սահմանված այլ համապատասխան օրինական հիմքի, մենք կջնջենք այդ տվյալները:

10. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Կոկա-Կոլան կարող է անձնական տեղեկությունները փոխանցել սահմաններից այն կողմ ցանկացած վայր, որտեղ գործում ենք մենք, մեր մատակարարները և բիզնես գործընկերները: Այս այլ վայրերում կարող են լինել տվյալների պաշտպանության օրենքներ, որոնք տարբեր են (և որոշ դեպքերում, քիչ պաշտպանիչ) այն օրենքներից, որտեղ բնակվում եք Դուք: Մեր Ծառայություններից օգտվելով՝ Դուք համաձայնում եք Ձեր անձնական տվյալների փոխանցմանը Ձեր բնակության վայրից դուրս գտնվող վայրեր:

Եթե Ձեր անձնական տվյալները փոխանցվում են սահմաններից դուրս մեր կողմից կամ մեր անունից, մենք օգտագործում ենք համապատասխան անվտանգության միջոցառումներ, ինչպիսիք են ստանդարտ պայմանագրային կետերի կամ մոդելային կետերի համաձայնեցումը, որպեսզի պաշտպանենք Ձեր անձնական տվյալները այս ծանուցագրին և գործող օրենսդրությանը համապատասխան: Այս անվտանգության միջոցառումները պահանջում են, որ մեր դուստր ձեռնարկությունները, մատակարարները և գործընկերները պաշտպանեն անձնական տվյալները գործող գաղտնիության օրենքներին համապատասխան: Մենք նաև ապավինում ենք հետևյալ իրավասությանը հատուկ փոխանցման մեխանիզմների և անվտանգության միջոցառումների վրա.

- **ԵՄ-ԱՄՆ տվյալների գաղտնիության շրջանակ**: Մեր ԵՄ-ԱՄՆ տվյալների գաղտնիության շրջանակի լրացուցիչ քաղաքականությունը նկարագրում է, թե ինչպես ենք մշակում անձնական տվյալները, որոնք Կոկա-Կոլան ստանում է ԱՄՆ-ում ԵՄ-ից, Միացյալ Թագավորությունից և Շվեյցարիայից՝ ելնելով ԵՄ-ԱՄՆ Տվյալների գաղտնիության շրջանակից, Մեծ Բրիտանիայի՝ ԵՄ-ԱՄՆ տարածվող DPF-

ից (Տվյալների գաղտնիության շրջանակ) և Շվեյցարիա-ԱՄՆ Տվյալների գաղտնիության շրջանակից, ինչպես սահմանված է ԱՄՆ Առևտրի դեպարտամենտի կողմից (միասին՝ **DPF Շրջանակ):**

- **Արտասահմանյան գաղտնիության կանոնների (CBPR) համակարգ**: Այս գաղտնիության ծանուցագրում նկարագրված Կոկա-Կոլա ընկերության գաղտնիության քաղաքականությունը համապատասխանում է Գլոբալ արտասահմանյան գաղտնիության կանոնների (CBPR) համակարգին: CBPR համակարգի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ: Մեր հավաստագրումը դիտելու համար այցելեք CBPR համակարգի տեղեկատու: Մեր մասնակցության շրջանակի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կամ մեր հաշվետվության գործակալի՝ BBB ազգային ծրագրերի միջոցով գաղտնիության վերաբերյալ հարցում ներկայացնելու համար խնդրում ենք դիտել մեր CBPR-ի հավաստագիրն այստեղ:
- **Համաձայնություն**: Եթե Ձեր անձնական տվյալները գտնվելու վայրից դուրս փոխանցման համար համաձայնություն պահանջվի, մենք փոխանցումն իրականացնելուց առաջ կստանանք Ձեր առանձին համաձայնությունը: Օրինակ՝ Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքում հավաքված և ստեղծված անձնական տվյալները կպահվեն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքում: Եթե անհրաժեշտ լինի փոխանցել Ձեր անձնական տվյալները Չինաստանից դուրս, մենք կստանանք Ձեր առանձին համաձայնությունը փոխանցումն իրականացնելուց առաջ: Ձեր անձնական տվյալներն արտասահման փոխանցելուց առաջ մենք կընդունենք օրենքով թույլատրված օրինական փոխանցման մեխանիզմ և կձեռնարկենք անհրաժեշտ քայլեր՝ ապահովելու, որ ստացողի կողմից տվյալների մշակումը համապատասխանի Չինաստանի գործող օրենքներին:

Մեր ստանդարտ պայմանագրային դրույթների կամ անձնական տվյալների արտասահման փոխանցման այլ երաշխիքների մասին տեղեկատվություն խնդրելու համար՝ խնդրում ենք այցելել Կապ հաստատեք մեզ հետ:

11. ՍՊԱՌՈՂԻ ԱՅՍ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քանի որ բիզնեսը և տեխնոլոգիաները զարգանում են, այս ծանուցագիրը կարող է թարմացվել՝ փոփոխություններին անդրադառնալու համար: Ամենաթարմ տարբերակը կտեղադրվի դրա կայքէջում՝ ուժի մեջ մտնելու ամսաթվով: Որոշակի օրենքներ կարող են պահանջել լրացուցիչ քայլեր, ինչպիսիք են՝ էական փոփոխությունների համար Ձեզ տեղեկացնելը կամ Ձեր համաձայնությունն ստանալը, նախքան դրանք իրականացնելը: Այս ծանուցագիրը պարբերաբար վերանայելը կտրամադրի տեղեկատվություն Ձեր անձնական տվյալների օգտագործման հետ կապված ցանկացած թարմացման մասին: